ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՂԱՎՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

01.08.2009թ.- 01.04.2010թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ.ԴԱՆԻԵԼՅԱՆ**

ԱՂԱՎՆԱՁՈՐ **2010թ.**

Հարգելի Աղավնածորցիներ 2009թ. վերջին հինգ ամիսների և 2010թ. առաջին եռամսյակի ընթացքում համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2009թ. հունվարի 14-ին համայնքի ավագանին իր N3 որոշմամբ ընդունել է 2009թ.բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 20մլն 540 հազար 400 դրամ,ծախսերը՝ 23մլն 856 հազար 500 դրամ: Պակասորդը կազմել է 3մլն 316 հազար 100 դրամ,որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Աղավնածորի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 2.600 հազար դրամ : 2009թ. հողի հարկը հավաքագրվել է 2մլն 639 հազար 400 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 101,5% - ը: 33 տնտեսություններ օգտվել են հողի հարկի արտոնություններից,որոնց նախկինում կուտակված պարտքերի տուգանքները զրոյացվել են:

2009թ. գույքային հարկերը հավաքագրվել են 100,3 %- ով, որը բացարձակ թվով կազմել է 2մլն 707 հազար դրամ:

2009թ. դեկտեմբերի 18-ին համայնքի ավագանին իր N 41 որոշմամբ ընդունել է 2010թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 22մլն 231 հազար 900 դրամ, ծախսերը 22 մլն 308 հազար 300 դրամ:

Հողի հարկը կազմել է 2մլն 700 հազար դրամ, որից առաջին եռամսյակում հավաքագրվել է 2մլն 263 հազար 300 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 83,8 % - ը:

- **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 200 հազար դրամի օգնություն: Ուժեղ քամուց տուժած բնակիչներին տրվել է վնասի փոխհատուցում՝ 400 հազար դրամի չափով:

- **ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Աղավնաձորի միջնակարգ դպրոցի 2009-2010 թթ. ուս. տարվա շրջանավարտներին տրվել է 500 հազար դրամի նվերներ և էքսկուրսիայի ճանապարհածախս: Մշակույթի տան համար ձեռք է բերվել դաշնամուր և թենիսի սեղաններ, որի համար վճարվել է 500 հազար դրամ: Մշակույթի տանը գործում են պարի և երգի,դաշնամուրի, ասեղնագործության խմբակներ,գործում է գրադարանը:

- **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Աղավնաձոր համայնքը ստացել է ջրօգտագործման թույլտվություն, որի համար ամեն եռամսյակ մուծվում է 34, 7 հազար դրամ վճար: Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 710 հազար դրամ:

- **ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 4 թույլտվություններ,որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

- **ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2009թ. հոկտեմբերի 7-ին և դեկտեմբերի 28-ին կայացել են Աղավնաձոր համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են գյուղ նշանակության 2,8 հա 4-րդ կարգի անջրդի վարելահող, 0,38 հա բնակավայրի բնակելի կառուցապատման և 0,37 հա հատուկ պահպանվող տարածք: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե է մուտք եղել 5մլն 629 հազար 705 դրամ: